

Օքսֆամը հանուն հավասարության



Օքսֆամի հայաստանյան մասնաճյուղը, միանալով «Կանգնեցնենք խորացող անհավասարությունը» միջազգային քարոզարշավին, հայտարարել էր «Միասին, հանուն հավասարության» լուսանկարների մրցույթ, որի նպատակն էր իրավիճակը հանրության ուշադրությունը մեր կյանքը շրջապատող անարդարության տարբեր դրսևորումների և առաջին հերթին, աղքատության վրա, որն այսօր աճի և վերարտադրման վտանգավոր միտումներ ունի մեզանում:

2015-ին ընդառաջ

2000-ի սեպտեմբերին Հազարամյակի զարգացման ընդունված հռչակագիրը և զարգացման ութ նպատակները յուրօրինակ ուղեցույց դարձան աշխարհի 189 պետությունների, այդ թվում՝ մեր Հայաստանի համար: 2015-ին լրանում է «Հազարամյակի զարգացման նպատակների» իրականացման ժամկետը: Այժմ ՄԱԿ-ում ակտիվորեն քննարկվում է 2015 թվականից հետո զարգացման նոր նպատակների և առաջնահերթությունների առաջադրումը: Աղքատության հաղթահարումը նախկինի պես առաջին տեղում է, աշխարհում դեռևս 1,3 մլրդ մարդ ծայրահեղ աղքատության մեջ են ապրում:



Հազարամյակի զարգացման նպատակներ

ՀՁՆ 1. Ծայրահեղ աղքատության ու սովի վերացում

Թիրախ 1. Մինչև 2015 թվականը, 1990 թվականի համեմատ, ապահովել աղքատության ավելի ցածր մակարդակ

Թիրախ 2. Մինչև 2015 թվականը, 1990 թվականի համեմատ, կիսով չասի կրճատել սովից տառապող մարդկանց թիվը

Թիրախ 2.A. Ապահովել լրիվ ու արդյունավետ զբաղվածություն և արժանավայել աշխատանք բոլորի համար, ներառյալ կանանց ու երիտասարդների

Դեռևս 2010-ին հրապարակված ՀՁՆ երկրորդ Ազգային առաջընթացի զեկույցի համաձայն՝ Հայաստանի կողմից տեղանայնացված առաջին երկու թիրախների ցուցանիշները, մասնավորապես 1-ինը և 2-րդը, համարվել էին դժվարաբացելի, իսկ թիրախ 2.A-ի հասանելիությունը անհավանական էր գնահատվում:

Ենթադրյալ, որ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը նախատեսում է 2017-ին աղքատության մակարդակը երկու անգամ նվազեցնել 24%-ի (2012-ի՝ 32,4-ի փոխարեն), 2021-ին՝ շուրջ 18%-ի, իսկ 2025-ին՝ շուրջ 13%-ի: Ծայրահեղ աղքատության պարագայում նախատեսվում է 2017-ին այն հասցնել 2,4%-ի (2012-ի 2,8-ի փոխարեն), 2021-ին՝ 2,1%-ի, իսկ 2025-ին՝ 1,8%-ի՝ ըստ երկրի լուծելով այս հիմնախնդիրը:

Աղքատության և քաղաքականությունը



Անարդար օրենքներով արդարություն չեն հաստատում

Էջ 4

ՃՅ՝ 1 ձօ՛՛ Գձձ՝ 3 նի՛՛ ձօ՛՛ 2014

2Յ՛՛ 1 x 3 ն Ն՛՛ 1 յ՛՛ 3 Ի՛՛
www.WomenNet.am



Ամեն երրորդը՝ աղքատ Հայաստանում աղքատության մակարդակը 32,4% է (980 հազար մարդ): Աղքատներից 13,5%-ը շատ աղքատ է (408 հազար մարդ), 2,8%-ը՝ ծայրահեղ աղքատ (մոտ 85 հազար մարդ):

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 33 ԱԿԾ, 2013

Լուսանկարը՝ Լիլիան Գալստյանի

ՅՅ յ՛՛ 3 Ի՛՛ 6 յ՛՛ 2 նձ՛՛ 1/2՛՛ 3 նՅ՛՛ 1 ԿՅ՛՛

«Կանգնեցնենք խորացող անհավասարությունը»

Այս կարգախոսի ներքո է ողջ աշխարհում մեկնարկել Օքսֆամ միջազգային բարեգործական կազմակերպության կողմից հայտարարված քարոզարշավը անարդարության և անհավասարության դեմ: Կազմակերպության համար, որը հայտնի է աշխարհի 120 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում իր՝ ավելի արդար և ապահով, առանց մարդկային տառապանքի և աղքատության աշխարհ կառուցելու առաքելությանը, անդրադարձը անհավասարության թեմային անշուշտ պատահական չէ: Դեռևս այս տարվա սկզբին Դավիտում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումին ընդառաջ Օքսֆամի նախաձեռնությանը հրապարակվել էր մի զեկույց, որի վերնագիրն ինքնին աղմուկահարույց էր՝ «Աշխատելով մի քանիսի համար. Քաղաքականության զավթում և տնտեսական անհավասարություն»:

Այն ուշադրություն էր հրավիրում մի շարք «սպանիչ» փաստերի վրա, որոնք հետազոտական խմբի հատուկ ուսումնասիրության արդյունք էին:

- Աշխարհի 85 ամենահարուստ մարդկանց ունեցվածքն այնքան է, որքան 3,5 մլրդ ամենաաղքատներից՝ միասին վերցրած:
- Աշխարհի ամենահարուստ 1%-ին է պատկանում աշխարհի հարստության 46%-ը:
- Ամենահարուստ 10%-ին է պատկանում հարստության 86%-ը:
- Ամենաաղքատ 10%-ը խրված է պարտքերի մեջ:
- Աշխարհի յուրաքանչյուր 10 բնակիչներից 7-ն ապրում են այն երկրներում, որտեղ հարուստների և աղքատների միջև խզումը ավելի վատթար վիճակում է, քան 30 տարի առաջ:

Այս զեկույցով Օքսֆամը փորձել էր կոչ անել Դավիտում հավաքված բոլոր երկրների առաջնորդներին դիտարկել տնտեսական անհավասարությունը որպես մարդկային առաջընթացի սպառնալուծ մեծ վտանգ, որն ազդում է սոցիալական կայունության վրա երկրների ներսում և սպառնում է անվտանգությանը գլոբալ մասշտաբով:

Հետազոտության հեղինակները նշում են, որ տնտեսական ռեսուրսների կենտրոնացումը ընդամենը մի քանի մարդկանց ձեռքում սպառնալիք է քաղաքական և տնտեսական համակարգերին, և առնչվում է նաև այլ անհավասարությունների, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց միջև եղած անհավասարությանը: Արդյունքում՝ քաղաքական ինստիտուտները թուլանում են, և կառավարությունների գերակշռ մասը ծառայում է տնտեսական էլիտայի շահերին՝ ի վնաս հասարակ մարդկանց: Իրականում տեղի է ունենում մեծահարուստների կողմից քաղաքական և տնտեսական լծակների զավթում, «հնարավորությունների զավթում», համարում են զեկույցի հեղինակները:

Սակայն ամենակարևորը, որ այս փաստաթղթի միջոցով ցույց է տալիս Օքսֆամը, այն է, որ մարդկային անհավասարությունը անխուսափելի չէ: Օրինակ են բերվում աշխարհի մի շարք պետություններ, որոնք իսկապես նվազեցրել են անհավասարությունը և զարգացրել են այնպիսի ներկայացուցչական քաղաքականություն, որը շահավետ է և հարուստների, և աղքատների համար:

Չեկույցում զետեղված փաստերից ամենամեծ աղմուկն առաջացրեց աշխարհի 85 ամենահարուստ մարդկանց ունեցվածքի մասին փաստը: Այս առնչությամբ հետազոտական խմբի ղեկավար Ռիկարդո Ֆուենտեսը բացատրություններ ներկայացրեց՝ ինչպես են իրենք հանգել այդ եզրակացությանը:

«Սա պարզ հաշվարկ է, բայց, այնուամենայնիվ, մեծ ջանքեր են պահանջվել: Նախևառաջ՝ մենք ի սկզբանե մտադիր չէինք վիճակագրական շոկ առաջացնել, ինչպես պնդում էին շատ մեկնաբաններ: Փաստերը ինքնին բավական շոկային էին: Ամենացնցողը հարստության գերկենտրոնացումն է ամբողջ աշխարհում, դա է փաստը: Մենք ուսումնասիրել ենք մի շարք հասանելի տվյալների բազաներ եկամտի և հարստության վերաբերյալ և վերլուծել միտումները: Կարիք չկար անարդարություններ հորինելու, եթե արդեն իսկ կյանքը լի է այդպիսի իրական անարդարություններով...», - ասաց փորձագետը:

Ավելացնենք, որ զեկույցի հրապարակումից անմիջապես հետո բրիտանական Guardian-ը բացահայտել էր աշխարհի այդ 85 ամենահարուստներին անուն առ անուն՝ նշելով, որ թեպետ նրանք երբեք չենք օգտվում ավտոբուսից, բայց կարող էին տեղավորվել մեկ երկհարկանի լոնդոնյան ավտոբուսում... Պարբերականը նաև շեշտում է, որ այդ ավտոբուսի դեկին միայն տղամարդիկ են, իսկ կանանց համար նախատեսված է ընդամենը 7 տեղ, այն էլ՝ ավտոբուսի առաջին հարկում...

Պեկին+20. Կինը և աղքատությունը

Պեկինի գործողությունների ծրագրով նախանշված առաջին իսկ խնդրահարույց ոլորտը «Կանայք և աղքատություն» է: Ոմանք ասում են՝ աղքատությունը սեռի հատկանիշով չի բաժանվում, և աղքատ երկրում սոցիալապես հավասար ճնշված են թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք: Սակայն վիճակագրությունն ինչ էլ ապացուցի, սոցիալական խնդիրների ծանր բեռն առաջին հերթին հենց կանանց ուսերին է ընկնում, որովհետև, ինչպես պնդում են փորձագետները, «տղամարդը միայն վաստակում է ու ոչ միշտ՝ բավարար, իսկ այդ միջոցները հմտորեն բաշխելը, ընտանիքն աղքատությունից ու սովից փրկելը կնոջ գործն են»: Հայաստանն այս հարցում բացառություն չէ, մեզանում էլ աղքատության մեկնեղները և խոսնակները կանայք են:



Պեկինի ծրագիրն առաջարկում է գործել հետևյալ ուղղություններով.

- Մակրոտնտեսական քաղաքականության մշակում և իրականացում, աղքատության մեջ ապրող կանանց կարիքները հաշվի առնող զարգացման ռազմավարություններ.
- Օրենքների և վարչական ընթացակարգերի վերանայում՝ կանանց իրավունքների հավասարության և տնտեսական ռեսուրսներին նրանց հասանելիության ապահովման նպատակով.
- Կանանց համար վարկերի հասանելիության ապահովում.
- Գեներային գործունեի հաշվառմամբ հետազոտությունների անցկացում աղքատության ֆեմինացման խնդրի լուծման նպատակով:

Ö aň0³ · »İ Ç İ³ ñİ Çü

Թվեր և փաստեր

Աղքատությունը երևանում և մարզերում

ՀՀ ԱԿԾ տվյալներով Հայաստանում աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը առավել տարածված են մարզային քաղաքներում, որտեղ աղքատության մակարդակը 40,2% է, ինչը 1,6 անգամ բարձր է Երևանից: Միջին հանրապետականից բարձր են Շիրակի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի և Արմավիրի մարզերի ցուցանիշները: Այստեղ աղքատները կազմում են բնակչության 39-46%-ը: Շիրակի մարզը շարունակում է մնալ Հայաստանի ամենաաղքատ տարածաշրջանը, որտեղ աղքատության գծից ցածր է բնակչության 46,0%-ը:

Ովքեր են աղքատ համարվում

2012-ին աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին՝ ընդհանուր գծից՝ 37.044 դրամ (92,2 դոլար), շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին՝ ընդհանուր գծից 30.547 դրամ (76 դոլար), իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից՝ 21.732 դրամ (54,1 դոլար):

Աղքատները աղքատանում են, հարուստները՝ հարստանում

Հաշվարկները ցույց են տալիս, որ տնտեսական աճի պայմաններում աղքատները շահում են, բայց ոչ այնքան, որքան հարուստները, իսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում (2009-2010 թթ.), երբ տնտեսությունն անկում է ապրում, ավելի շատ տուժում են հենց աղքատները, իսկ հարուստները, անգամ ճգնաժամի պայմաններում, հիմնականում շարունակում են հարստանալ: Հայաստանում աղքատության մակարդակը 2012-ին կազմել է 32,4%՝ նախաճգնաժամային 2008-ի համեմատ ավելանալով 17,4 տոկոսով:

Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք

ՀՀ ԱԿԾ տնային տնտեսությունների հետազոտության համաձայն՝ իրենց կենսամակարդակը բարձրացնելու մասին խոսելով հարցվածների 34,3%-ը նշել է, որ ինձնից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է ապահովի աշխատանք և լավ պայմաններ, 12,5%-ը նշել է, որ փնտրում է եկամտաբեր աշխատանք Հայաստանում, իսկ սեփական գործ ցանկանում է սկսել Հայաստանում միայն 0,5%-ը: Հարցվածների միայն 30,3%-ն է կարծում, որ նոր սերունդն ավելի լավ կապրի, 27,9%-ը դժվարացել է պատասխանել, 21,7%-ի կարծիքով՝ նոր սերունդն ավելի վատ կապրի, մնացած 20,1%-ը ասել է՝ նրանք կապրեն նույն ձևով:

Մանկությունը աղքատության ճիրաններում

ՀՀ ԱԿԾ տվյալներով մինչև 18 տարեկան երեխաների 3,3%-ն ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 36,2%-ն՝ աղքատության մեջ: Հայաստանում երեխայի առկայությունը ընտանիքում ավելացնում է աղքատության մակարդակը: Երկու երեխա ունեցող տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 42% է: Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 43,2%-ը, իսկ ծայրահեղ աղքատ՝ 4,5%-ը:

Հայաստանում յուրաքանչյուր 5-րդ երեխան թերսնված է

Մասնագետներն ահազանգում են, որ Հայաստանում մինչև 5 տարեկան երեխաների մոտ 20 տոկոսը, այսինքն՝ յուրաքանչյուր հինգերորդը, քրոնիկական թերսնված խնդիր ունի, և դա ազդում է նրանց ֆիզիկական և մտավոր զարգացման վրա: Որպես հետևանք՝ այդ երեխաների հասակը կարճ է և քաշը նվազ է միջին ցուցանիշների համեմատ, նրանց մոտ կա նաև սակավարյունության խնդիր:

Աղքատությունը թիվ մեկ գործոնն է, որ բերում է երեխայի թերսնված, թերսնվող երեխաների տոկոսը ավելի բարձր է աղքատ ընտանիքներում: «Աղքատ ընտանիքներում թերսնված ցուցանիշը 25 տոկոս է, բայց խնդիրն առկա է նաև բարեկեցիկ ընտանիքներում՝ 16 տոկոս: Սա խոսում է այն մասին, որ միայն աղքատությունը չէ միակ պատճառը, այլ նաև ոչ ճիշտ սննդակարգը, մայրերի գիտելիքների պակասը»:



Photo by C-G.Rodero/Oxfam

«Աժխասող աղֆասներ՝ երևույթ, որը ֆաղաֆակիրք երկրների մեծ մասում չկա»

Ինչպիսի՞ն է աղքատության իրական պատկերը Հայաստանում: Որոշ փորձագետներ նշում են, որ այն շատ ավելի բարձր է, քան պաշտոնական վիճակագրությունն է ներկայացնում: Այս հարցերի շուրջ մենք զրուցեցինք «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի հիմնադիր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի հետ:

«**Պ**ետք է նկատել, որ աղքատության իրական պատկերը դժվար է ներկայացնել: Մի քանի գործոններ կան, որոնք չենք կարող անտեսել: Առաջին՝ Հայաստանում կա թաքցված աղքատություն, որը ոչ մի տեղ գրանցված չէ: Կան անապահով ընտանիքներ, որոնք չեն դիմում և չեն գրանցվում աղքատության նպաստ ստանալու համար, քանի որ նպաստառու լինելու փաստն ապացուցելն այնքան էլ հեշտ չէ: Շատ հաճախ անգամ տանը հեռուստացույցի կամ մեկ այլ տեխնիկայի առկայությունը հաշվի առնելով ընտանիքին աղքատ չեն համարում և չեն տալիս նպաստ ստանալու իրավունք: Երկրորդ խնդիրն այն է, որ նույնիսկ աշխատող մարդկանցից ոչ բոլորն են կարողանում հաղթահարել աղքատության շեմը: Թվում է՝ եթե մարդիկ աշխատում են, ապա կարողանում են իրենց «զլուխը պահել» և գոյատևել, այնինչ նվազագույն աշխատավարձը թույլ է տալիս նրանց պարզապես չմեռնել, դա ավելի շատ թշվառություն է, քան աղքատություն: Այսինքն՝ մենք գործ ունենք աշխատող աղքատների հետ: Սա մի երևույթ է, որը քաղաքակիրթ երկրների մեծ մասում չկա:»

Այս ամենը բերում է տվյալ երևույթի վերաբերյալ ասիմետրիկ տեղեկատվության ստեղծմանը: Որևէ մեկը իրականում ճշգրիտ չի կարող ասել, թե որքան է կազմում թաքցված աղքատությունը:

Ի՞նչ միտումներ ունի աղքատությունը, ինչպիսի՞ն է շարժընթացը:

«Աղքատության ցուցանիշը աճի միտումն ստացավ 2008-ին՝ ֆինանսական ճգնաժամի ժամանակ: Սակայն մենք պետք է տարանջատենք ներքին ճգնաժամը գլոբալ ճգնաժամի ազդեցությունից: Ի վերջո, համաշխարհային ճգնաժամն անցնում է, իսկ մեզ մոտ ներքին ճգնաժամը դեռ մնում է: Այսինքն՝ այս պարագայում պետք է տեսնել, թե որո՞նք են աղքատության պատճառները:»

Ըստ իս՝ պատճառներից է ՀՆԱ-ի անհամաչափ բաշխումը: Այն եկամտունեքը, որոնք ստեղծվում են երկրում, անհամաչափ են բաշխվում: Գաղտնիք չէ, որ հարստության 80-85 տոկոսը կենտրոնանում է բնակչության 10-15 տոկոսի մոտ, իսկ մնացածը բաժին է ընկնում բնակչության մեծ մասին: Բևեռացման մասն պայմաններում անհիմաստ է խոսել աղքատությանը կրճատման և միջին խավի ձևավորման մասին:

«Ի՞նչ կասեք աղքատության ֆեմինացման մասին, ինչո՞ւ են կանայք ավելի հաճախ հայտնվում սոցիալապես ամենախցելի խմբում:»

«Սոցիալապես ամենախցելի խմբում կանանց գտնվելը, ցավոք, ավանդաբար եղել է: Հայաստանում, շատ այլ երկրների համեմատությամբ, կնոջ դերը, իհարկե, ավելի բարձր վիճակում է, բայց կնոջ աշխատանքը երբեք ըստ արժանվույն գնահատված չի եղել: Չէի ասի, թե կինը համարժեք գնահատական է ստանում ընտանիքում, աշխատավայրում, հասարակությունում: Ընդհանուր առմամբ, հայ կանանց մեծ մասը սոցիալապես խոցելի հատվածում է գտնվում, և պատճառներից մեկը ընտանիքում հայրիշխանությունն է: Սա ավանդական եկել է, և դա բերում է տղամարդու գերակա դերի արժևորման հասարակությունում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:»

Ըստ Ձեզ՝ ի՞նչ քայլեր է պետք ձեռնարկել աղքատության ու սոցիալական բևեռացման հաղթահարման ուղղությամբ:

«Նախևառաջ պետք է բարձրացնել նվազագույն աշխատավարձը և դրա մեջ ներառել կենսապահովման նվազագույն գամբուլի հաշվարկը: Բացի այդ, պետք է տնտեսության մեջ առողջ, մրցակցային միջավայր ստեղծել: Բացի այդ, գիտելիք պետք է պահանջված լինի: Ես բարեկեցության և գիտելիքի միջև կապ եմ տեսնում...»

Ö³ Ū³ μ³ ¼Ū³ ó

«Աղֆասները չեն խոստովանում, որ ոչինչ չունեն, հարուստներն էլ՝ որ ամեն ինչ ունեն»

«Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանը, վկայակոչելով 2013-ին իրենց անցկացրած ուսումնասիրությունները, ասում է, որ Հայաստանում աղքատության շեմից ներքև ապրում է բնակչության 42%-ը, նրանցից ավելի քան 10%-ը ծայրահեղ աղքատ է: «Հայաստանի բնակչության 13%-ը հարուստ մարդիկ են: Օլիգարխների թիվը կազմում է ընդհանուր բնակչության 0,2%-ը: Այսպիսով, համեստ ապրողին կամ, այսպես կոչված, միջին խավին բաժին է ընկնում ավելի քան 40%-ը», - ասում է Ադիբեկյանը:



«**Մ**իաժամանակ, Հայաստանում և՛ աղքատները, և՛ հարուստները նախընտրում են չխոսել ու չպատասխանել իրենց սոցիալական վիճակի մասին հարցերին, աղքատները չեն խոստովանում, որ ոչինչ չունեն, հարուստներն էլ՝ որ ամեն ինչ ունեն: Սոցիոլոգի կարծիքով՝ դա մարդկանց յուրահատուկ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների արդյունք է: «Արդյունքում՝ աղքատության շեմից ներքև ապրող անձանց կեսն է իրեն այդպիսին համարում: Ծայրահեղ աղքատների 10,2%-ից իրեն այդպիսին է համարում միայն 3,7%-ը: 13% կազմող հարուստ, ունևոր խավից միայն 2,2%-ն է խոստովանում, որ հարուստ է: Համեստ ապրող հա-»

մարում է հարցվածների 70%-ը, թեև նրանց թիվը իրականում 40% է», - ասում է սոցիոլոգը:

Սոցիոլոգի կարծիքով՝ Հայաստանում բևեռացման խորացման պատճառը միջին խավի արտագաղթն է: «Միջին դասը արտագաղթում է: Արտագաղթելու համար նա հնարավորություն ունի, բիզնես ունի, վաճառում է, էլ գումարով գնում, մնում են նրանք, ովքեր հարմարված են, և նրանք, ովքեր հնարավորություն չունեն արտագաղթելու», - ասում է Ադիբեկյանը՝ նշելով, որ, ըստ հարցումների՝ հարցվածների 40-42%-ը ռեալ արտագաղթող է:

Նրա դիտարկմամբ՝ արտագաղթի պատճառով միջին դասը կորցնելով՝ Հա-»

յաստանը կարող է աստիճանաբար դառնալ ասիական տիպի երկիր: «Եվրոպական երկրների մոդելի դեպքում, ի տարբերություն ասիականի, կա հզոր միջին դաս, որը կարողանում է մեղմացնել չքավորների դրությունը, ազդել հարուստների վրա», - նկատում է նա:

Ըստ սոցիոլոգի՝ մեկ այլ խնդիր է այն, որ հայ ընտանիքների մոտ 17 տոկոսն ապրում է ոչ թե վաստակածով, այլ փոխանցումների հաշվին: «Հայաստանի 300 հազար երեխաներ ապրում են առանց հայրերի, քանի որ վերջիններն արտերկրում են գտնվում: Դա հետագայում կհանգեցնի ամենաբացասական հետևանքների», - կարծում է սոցիոլոգը:

ÆYã³ Y»É

Որքան կարժե՞նա աղֆասության հաղթահարումը

Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 69,4 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1,7 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեակառուցման կտրամադրվի միայն աղքատներին:

Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 2,0 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0,1 %-ը:

Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման ամբողջ հասցեակառուցումն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող

փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

Բարձր հասցեակառուցումն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ, ազատական տնտեսակարգով երկրներում աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հարկ է առնվազն կրկնապատկել:

«՞ն» և «՞ն» Ի Ասօ՞Ւն Ին՞՞

«Ես ումի՞ց արդարություն դաժանեմ...»

43-ամյա Մարինեն գրեթե օր չկա, որ ինքն իր կյանքը չհանդիպի: Ասում է՝ ամեն օր Աստուծոն հարց է տալիս՝ «բայց ո՞ր մեղքիս համար, խի՞ եմ ես էսքան տանջվում, խի՞ ա իմ ընտանիքն ես վիճակում»: Մարինեն մայրաքաղաքի ռեստորաններից մեկում է աշխատում, ասում է՝ օրումն է աշխատանքի գնում, այդպես է կարգը, հերթափոխով են աշխատում, ամեն աշխատանքային օրը 3 հազար դրամ է վարձատրվում: Դժգոհ է, շատ է աշխատում, քիչ վարձատրվում: Բայց ճար չունի, պիտի աշխատի, որպեսզի ընտանիքի հոգսերը հոգանա...

Քան տարեկան էր, երբ մեր երկիրն ազատ, անկախ պետություն դարձավ, Մարինեն լիազոր էր, որ կյանքն այլ կերպ կդասավորվի: Սիրած տղա ուներ, ծրագրել էին ամուսնանալ, ընտանիք կազմել, շատ երեխաներ ունենալ: Ամուսնացավ սիրած տղայի հետ, բայց սկսվեց Արցախյան պատերազմը, ամուսինը ուսումը կիսատ թողնելով՝ գնաց պատերազմ: Կռվեց մինչև վերջ, պատերազմի ավարտից հետո էլ, երբ վերադարձավ, երկար ժամանակ աշխատանքի փնտրությունների մեջ էր, բացի այս, այլևս չէր կարող ուսումը շարունակել ու մասնագիտություն ստանալ: Ամուսիններն իրենց ամբողջ կյանքում բանվոր են աշխատել՝ հազիվ ծայրը ծայրին հասցնելով ու երկու երեխաներին գոնե արժանապատիվ մեծացնելով: «Էդ արժանապատիվն էլ շատ հարաբերակալ է, ում համար՝ արժանապատիվ, ում համար էլ՝ նվաստացուցիչ: Ասենք՝ իմ տղայի գրեթե բոլոր ընկերները բանկարժեք հեռախոս ունեն, հարուստ պապաներն են առել, էլ չեն ասում, թե օրական ինչ նոր ու թանկարժեք շոր են հագնում ու իրանց ցույց տալիս: Տղաս ոնց

որ սկսի խուսափել ընկերներից, քիչ շփվի, բայց մի բակի էրեխեք են, ոնց էլ լինի՝ մանկություն են միասին անցկացնում, բայց շատ ընկճված է իրեն զգում, ես դա տեսնում եմ: Ի՞նչ անեն, կաշվից էլ դուրս գանք, չենք կարա նրանց պես հագցնենք»,- ասում է Մարինեն:

Ամուսինն էլ՝ Արայիկը, որդուն գոտեպնդելու համար ռազմի դաշտի իր նկարներն է ցույց տալիս ու ասում: «Դուստից մի ընկի, տես՝ թո հերն էլ կըված տղա ա, Ղարաբաղն ենք ազատագրել, հո ամեն ինչ փողի մե՞ջ չի»: Այս խոսքերը որդուն է ասում, բայց իրականում հիասթափված, հուսահատ վիճակում է:

«Ես ումի՞ց արդարություն պահանջեմ, էս ա աշխարհի դավաճոք, ես ո՞ւմ բողոքեմ, որ երբ կրվում էի Ղարաբաղի համար, իմ հարևանը, իմ մանկության ընկերը, նույն շենքից ենք, գնաց Ռուսաստան, գնաց աշխատեց, փող կուտակեց, հարստացավ ու որ պատերազմը պրծավ, նոր հետ եկավ: Հիմա վայելում ա կյանքը: Ես երկրորդ խմբի հաշմանդամ եմ, ու հաշմանդամ եմ դարձել կռվի դաշտում, հա, թոչակ եմ ստանում, երբ ռեմոնտի գործ ա լինում, զնում,

անում եմ, բայց նորմալ ապրելուն չի հերիքում: Հենա կինս կուպեկներ ա ստանում, հեսա պիտի երկու էրեխեքին էլ ուսման տանք, վճարովի ա, ուզում ենք, որ անպայման բարձրագույն կրթություն ստանան, մասնագետ դառնան, բայց ուսման վարձերն էնքան բարձր են, չգիտեմ՝ ինչ ենք անելու: Երևի տունը ծախենք...»

Արայիկն ասում է, որ աղքատությունը նախկին ընկերների իրարից հեռացրել է, իսկ ժամանակին իրարից անբաժան էին...

«Որ Հայաստան եկավ, էլի չփվում էինք, բայց, դե, գիտեք, մեկ-երկու անգամ ծնունդի հրավիրեց, գնացինք, տեսանք, որ սաղ հարուստ մասա ա, ոսկեղենով ու բրիլիանտներով, մեծ-մեծ բաներից են խոսում, զգացի, որ էլ չեմ կարա չփվեմ... Ես էդ ժամանակ զգացի՞ ինչ նվաստացուցիչ ա աղքատ լինելը: Հիմա մեր էրեխեքն են ընկերություն անում, բայց մեկ ա, չի ստացվում, շատ տարբեր խավերից ենք արդեն»:

Հոգեբաններն ասում են, որ սոցիալական անարդարությունը ինչ-որ առումով սուբյեկտիվ ընկալում է. հարուստը կարող է միանգամայն արդարացի համարել իր հարստանալը, քանի որ ավելի ճարպիկ է եղել, աղքատն այդպես չէ անհաջողակ է եղել, թե այդ հարստացումն ինչ ճանապարհով է եղել: Մեզանում սկզբնական կապիտալի կուտակումը միշտ չէ, որ արդար աշխատանքի արդյունք է եղել: Դրա համար էլ սոցիալական անարդարությունն ավելի ցավազին է ընդունվում...

Երևույթային տրամադրիչ չեն խանդում

Գործի տարածաշրջանի Երևույթային գյուղը ամենամեծ համայնքն է, այն նաև բազմազավակ ընտանիքներով է հայտնի. մինչև 13 երեխա ունեցողներ էլ կան: Գյուղում ոռոգման ջուր չկա, հողագործությանը զբաղվելու պայմաններ չկան: Համայնքում բազմաթիվ են նպաստառու ընտանիքները: Տղամարդիկ կան արտագնա աշխատանքի մեջ են, կան էլ մի քանի անասուն են պահում: Կենցաղային հոգսերը մեծ մասամբ կանանց ունեին են:

«Անհամբեր սպասում ենք, թե երբ է շուշանը դուրս գալու, մեր փրկությունն էր ա, հիմա լիքը պարտքեր կանենք, հետո պիտի սկսենք հեթո՞վ փակել,- պատմում են Երևույթային կանայք՝ ավելացնելով,- գիշերը՝ ժամը 2-ին, բեռնատար գազելով, փակ, ամօղ խցիկում, զնում ենք Ղարաբաղ, օրերով մնում ենք էնտեղ, մեր ամուսինները մեզ չեն խանդում, էր էլ մեր գործն ա: Վաղ առավոտից սկսում ենք շուշան հավաքել, ցեխ, անձրև, շտապում ենք ինչքան կարողանալ շատ քաղցեմք, բա հասել ենք էնտեղ, զոնե կարգին եկամուտ ստանանք, անցնում ենք մեծ տարածություն, հետո, մեշոկներ շալակած, ցեխի մեջ կորած, հետ գալիս»:

Կանայք շուշանը բերում են, փնջեր անում և վաճառում մթերող ընկերություններին: Ստացված եկամուտով, ինչպես իրենք են ասում, պարտքերն են փակում: «Մի կողմից՝ ծանր աշխատանքը, մյուս կողմից էլ՝ արտատերերի ճնշումները մեզ կատարում, ուրիշի դաշտերն ենք մտնում: շտապատեղի գալիս է, ինչեր ասես ասում, հայիդում, մենք էլ արդարացումներ ենք փնտրում՝ որ երեխա ունենք, ամուսիններն արտագաղթել են, մեկ-մեկ խոնում են, մեկ-մեկ էլ՝ վիրավորում: Մի անգամ մեկը հեռավոր բարձր գոռալով մոտեցավ ու թե՛ է՛, ա՛յ անբարոյական, իմ հողի մեջ ի՞նչ ես անում, ես էլ ասեցի՞ սե՛նց ցեխոտ, կեղտոտ անբարոյական որտե՞ղ ես տեսել, երեխաներիս կարիքները հոգանում համար եմ եկել»,- պատմում է շինուհայրի Անուշը:

Կանայք իրենց դժվարությունների մասին նաև ինքնուրույն են խոսում, դրանցից շատերը արդեն որպես կատակ են ներկայացնում: Տիկին Թելին պատմում է, որ մի անգամ ուրիշի դաշտ մտնելու համար ոստիկան էր եկել, մեքենան ոստիկանության բաժին տարել:

Կանայք իրենց դժվարությունների մասին նաև ինքնուրույն են խոսում, դրանցից շատերը արդեն որպես կատակ են ներկայացնում: Տիկին Թելին պատմում է, որ մի անգամ ուրիշի դաշտ մտնելու համար ոստիկան էր եկել, մեքենան ոստիկանության բաժին տարել:

«Էդ նեղ պահին ոստիկանը հարցուփորձ է անում, իմ ընկերուհին էլ, անհանգստացած, դիմում է նրան՝ եթե մեզ բաժին տանեք, կլինի՞՞ ես ու ընկերուհիս մի խցում մնանք»,- պատմում է տիկին Թելին: Երբ շուշան հավաքելու ժամանակը գալիս է, երեխաներն էլ են միանում մայրերին: Գյուղի կանայք պատմում են, որ, օրինակ՝ վերջին զանգին շրջանավարտները դասից հետո դաշտ են գնում, իրենք իրենք հավաքած շուշանի գումարով են հազուստ առնում, ծախսերը հոգում:

Կանայք նաև պատմում են, որ ձմռանն էլ հանգիստ չունեն, տոնաներով պրոպի են բերում գյուղ, պատվիրում, որ ջարդեն, մեկ կիլոգրամ ջարդած պրոպիի համար վճարում են 1000 դրամ: Կանայք ասում են, որ ամեն տան երեք-չորս երեխա կա, վերահսկում են, որ հանկարծ պրոպի չուտեն. պակասում է, աշխատած գումարից դուրս են գալիս:

Կանայք հիմա նաև բուրդ մանել են սովորում: Շուտով համայնքում բրդի լվացման արտադրամաս կգործարկի, Գործի կանանց զարգացման ռեսուրս կենտրոնը հիմնադրամի նախաձեռնությունն է...

Աշխատանքը սովորում. «Մեզ էսօր է դեմոստրացիա»

48-ամյա Մարինան տոնավաճառում հազուստ է վաճառում՝ գրեթե առանց ազատ օրերի, 10 տարի շարունակ՝ թե՛ ամռան շոգին և թե՛ ձմռան ցրտին: 53-ամյա Վարդուհին սեզոնային աշխատող է, իր համագյուղացի կանանց հետ գործանք սածիլ է տնկում, քաղցանում, իսկ ամբողջ ամառը՝ առավոտից մինչև ուշ գիշեր, միջոց տեսակավորում: Այս կանայք թեև աշխատում են, սակայն նրանցից ոչ մեկը չի համարվում զբաղված, քանի որ սովորային տնտեսության աշխատող են:

Օրենքից դուրս աշխատելով՝ նրանք ստիպված համակերպվում են նաև այն փաստի հետ, որ հաճախ ոտնահարվում են իրենց իրավունքները: Մարինան պատմում է, որ այս 10 տարվա ընթացքում երբեք չի ունեցել ընդմիջման համար հատկացված ժամանակ, գրեթե միշտ աշխատել է արտաժամյա, հանգստանում է ամիսը ընդամենը 2 օր, իսկ ահա արձակուրդ երեք էր ունեցել: Սակայն Մարինան, ինչպես նաև նրա մեծ շատերը, գերադասում են այս պայմաններով աշխատել սովորում, քան զալ օրինական դաշտ: Ինչո՞ւ...

- Փորձել եմ իմ գործատուների հետ խոսել գրանցելու մասին,- պատմում է Մարինան,- սակայն միշտ նույն պատասխանն է ստացել:

Առաջարկել են ամենացածր աշխատավարձը, դրան գումարած ամսական 10 հազար դրամ՝ արտաժամյա աշխատանքի համար և որոշ ամիսներին 5-7 հազար դրամ պարգևավճար, իմ գործատուն պատճառաբանում է, թե չի կարող ավելի վճարել, քանի որ աշխատող պահելու համար սոցվճարումներ է կատարում, կամ էլ առաջարկում է՝ վճարեմ իմ գրպանից: Գործատուին պահանջներ չես կարող ներկայացնել՝ կամ պիտի համակերպվես, կամ էլ գնաս, իսկ այսօր 40-ն անց կնոջ համար հեշտ չէ աշխատանք գտնել:

Կատարելով պարզ հաշվարկ՝ տեսնում ենք, որ գրանցման դեպքում Մարինայի ամսական աշխատավարձը կկազմի 45-52 հազար դրամ

կան ավելի քիչ, եթե պարգևավճար չստանա, իսկ այսօր նրա եկամուտը միջինը 80-90 հազար դրամ է, և հենց սրա համար էլ նա գերադասում է սովորում մնալ:

- Ես ընտանիք եմ պահում,- ասում է նա,- ավելի քիչ սովորով ուղղակի չենք կարող ապրել, կամ սոված կմնանք, կամ առանց զազի ու լույսի: Իմ ստացած աշխատավարձը շատ մեծ չէ, բայց դրանով կարողանում եմ գոնե որոշակի հարցեր հոգալ: Օրենքին համաձայն աշխատելը շատ լավ է, սակայն այդ օրենքը չի ապահովում իմ գոյությունը...

Մարինան էլ ու նրա մեծ սովորում աշխատող շատ կանայք գիտեն, որ թոշակի անցնելիս ստանալու են ամենացածր թոշակը՝ աշխատանքային ստաժ չունենալու պատճառով, սակայն նրանք ունեն մի ծանրակշիռ փաստարկ: «Մենք չգիտենք՝ վաղն ինչ կլինի, իսկ մինչև վաղը մեզ էսօր ա պետք ապրել, էրեխեքն էսօր են հաց ուզում ուտել»...

Հրավորության և հարստության բևեռներում

2012-ին 10 տոկոս ամենաապահով բնակչության դրամական եկամուտները գերազանցել են 10 տոկոս ամենաաղքատ խավի եկամուտները 15,9 անգամ, իսկ սպառողական ծախսերի մասով՝ 8,2 անգամ: 2012-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ կազմելով 0,269՝ 2008-ի 0,242-ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 2012-ին 0,372՝ 2008-ի 0,339-ի համեմատ:

Աղքատության ռիսկը մեծանում է, եթե՝



Մեծահասակների (60-ից բարձր տարիք) առկայությունն ավելացնում է ընտանիքների աղքատության մակարդակը 1,5 անգամ:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների (դրանք հանրապետությունում 32,2% են կազմում) աղքատության մակարդակը ավելի բարձր է (33,4%) տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների համեմատ (32%): Կնոջ գլխավորությամբ երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 38,3%-ն աղքատ է, իսկ 5,2%-ը՝ ծայրահեղ աղքատ, ինչը երկու անգամ բարձր է միջին ցուցանիշից:

Մեկ կան ավելի հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության ռիսկն ավելի բարձր է, նրանց 35,4%-ն է աղքատ, իսկ 11,0%-ը՝ ծայրահեղ աղքատ:

Աղքատների կեսն էլ չի օգտվում նպաստներից

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013-ի ամփոփ տվյալներով՝ աղքատ ընտանիքների թիվը 241.772 է, իսկ ընտանեկան և սոցիալական նպաստ է ստանում 102.570 ընտանիք, այսինքն միայն 42,4%-ը:

ՀՀ ԱԿԾ տվյալներով՝ 2012-ին ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների միայն 8,8%-ն է ունեցել անվճար բժշկական փաթեթից օգտվելու իրավունք:

Այսօր և 200 տարի առաջ

Ունևորների և չունևորների միջև անդունդն այժմ նույն մակարդակում է, ինչ 1820-ականներին՝ փաստում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետազոտության արդյունքները: Եվ դա՝ «առավել մտահոգիչ» զարգացումներից մեկն է վերջին 200 տարիների ընթացքում: Հետազոտողներն ուսումնասիրել են եկամուտների մակարդակները 25 երկրներում, այնուհետև դիտարկել են դրանք այն տեսանկյունից, եթե աշխարհը մի միասնական երկիր լիներ: Արդյունքները ցույց են տվել, որ եկամուտների անհավասարությունը կտրուկ իջել է 20-րդ դարի կեսին՝ Արևելյան Եվրոպայում կոմունիզմի բարձրացման հետ զուգահեռ, իսկ հետո կրկին աճել է վերջերս՝ հասնելով նույն մակարդակին, ինչ 200 տարի առաջ:



ձ և Բի և Կ և Ի և Ն և Ը

- Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է 50.000 դրամ
- Նվազագույն սպառողական զանբյուդի արժեքը՝ 56.214,9 դրամ:
- Պարենային զանբյուդի արժեքը՝ ամսական 31.759,8 դրամ:
- Մեկ ընտանիքին վճարվող ամսական միջին նպաստի չափը՝ 31.350 դրամ:
- Հիմնական բազային թոշակը՝ 14.000 դրամ, միջինը՝ 36.000 դրամ:
- Առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվազ նպաստի չափը՝ 50.000 դրամ:
- Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը՝ 18.000 դրամ:



Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում ամրագրված անձի սոցիալական ապահովության իրավունքը (Հոդված 12) նե-

րառում է պետության կողմից տրամադրվող բժշկական օգնության, տարիքային կենսաթոշակի, աշխատանքային վնասվածքի դեպքում օգնության, ընտանեկան նպաստի և երեխայի խնամքի նպաստի իրավունքը:

...Համեմատելով պետական այս նպաստների չափերը նվազագույն սպառողական զանբյուդի և պարենային զանբյուդի արժեքների հետ՝ պարզ է դառնում, որ պետության կողմից տրամադրվող սոցիալական օգնությունը բավարար չէ անձի նորմալ կենսամակարդակի ապահովման համար, ուստի չի ապահովվում անձանց սոցիալական ապահովության իրավունքը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ամենամյա զեկույցից, 2013

Օ և Է

Եթե Բիլ Գեյթսը կանխկանգնեց որդի իր ունեցվածքը և ամեն օր ծախսեր 1 մլն դոլար, նրանից կպահանջվեր 218 տարի՝ որը կարողությունը վատնելու համար: Սակայն իրականում իր հարստության համար տրվող տոկոսը նույնիսկ ամենահամեստ խնայողություններով (1,95 %-ով) նրան կբերեր 4,2 մլն դոլար յուրաքանչյուր օր:

